

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ

Մամլո հաղորդագրություն

15 ապրիլի, 2015 թ., Երևան

Հայաստանը ցանցային պատրաստվածությամբ բարելավել է իր դիրքը աշխարհում 7 տեղով՝ զբաղեցնելով 58-րդ հորիզոնականը

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՋՏՖ) Համաշխարհային մրցունակության կենտրոնի գործընկեր կազմակերպություն Հայաստանում, ներկայացնում է ՋՏՖ կողմից հրապարակվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային զեկույց 2015»-ի հիմնական արդյունքները:

Չեկույցի հիմքում ընկած է **ցանցային պատրաստվածության համաթիվը**, որը ցույց է տալիս երկրների տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումներին մասնակցելու և դրանցից օգտվելու պատրաստվածության աստիճանը, ինչն էլ նպաստում է մրցունակության բարձրացմանը: Այս տարի զեկույցը գնահատել է աշխարհում 143 տնտեսությունների 55 մրցունակությունը:

ՋՏՖ-ի գնահատականներով Սինգապուրը, Ֆինլանդիան և Շվեդիան շարունակում են առաջատար դիրքեր զբաղեցնել ցանցային պատրաստվածության վարկանիշով: Վարկանիշային առաջին հնգյակը եզրափակում են Նիդեռլանդները և Նորվեգիան:

Հայաստանը ցանցային պատրաստվածության ցուցիչով աշխարհում 58-րդն է 143 երկրների շարքում՝ նախորդ տարվա համեմատությամբ 7 տեղով բարելավելով դիրքը: 2012-2015թթ. ցանցային պատրաստվածության ցուցչի աճով Հայաստանն աշխարհում առաջատարն է՝ բարելավելով դիրքը 36 տեղով:

Նախորդ տարվա համեմատ աճ է գրանցվել համաթվի բոլոր 4 բաղադրիչների գծով: Ամենաեական բարելավում գրանցվել է ազդեցության բաղադրիչում (+13 կետ): Հայաստանի, ԱՊՀ երկրների, Ուկրաինայի և Վրաստանի ցանցային պատրաստվածության համաթվի և բաղադրիչների դինամիկան ներկայացված են ստորև:

Երկիր	Ֆանցային պատրաստվածություն		Միջավայրի բաղադրիչ		Պատրաստվածության բաղադրիչ		Օգտագործման բաղադրիչ		Ազդեցության բաղադրիչ	
	2015 վարկանիշ	Փոփոխություն	2015 վարկանիշ	Փոփոխություն	2015 վարկանիշ	Փոփոխություն	2015 վարկանիշ	Փոփոխություն	2015 վարկանիշ	Փոփոխություն
Ղազախստան	40	-2	55	2	35	-4	40	-2	44	-8
Ադրբեջան	57	-8	74	-4	64	-15	41	3	48	-2
Ռուսաստան	41	9	63	24	27	10	39	14	42	2
Ուկրաինա	71	10	104	10	28	6	94	7	82	16
Վրաստան	60	0	62	11	45	-5	72	3	64	10
Հայաստան	58	7	78	5	44	7	65	8	54	13
Տաջիկստան	117	-	92	-	124	-	121	-	99	-
Ղրղզստան	98	20	102	20	82	24	115	11	114	12

Նշված համադրելի երկրների շարքում ընդհանուր ցուցչի դրական տեղաշարժ են արձանագրել գրեթե բոլոր երկրները՝ բացառությամբ Ադրբեջանի և Ղազախստանի: Առավել էական բարելավում է արձանագրվել Ղրղզստանում (+20): Ադրբեջանը զիջել է իր դիրքերը (-8) այսպիսով էականորեն կրճատելով առավելությունը Հայաստանի նկատմամբ՝ զբաղեցնելով 57-րդ հորիզոնականը: Վրաստանը նախորդ տարվա համեմատ առաջընթաց չի գրանցել:

ՀՏՖ-ի գնահատականներով Հայաստանի ՏՀՏ ոլորտում առավել ուշագրավ առավելություններն ու թերություններն են.

Ամենաեական առավելությունները	Տեղ	Ամենաեական թերությունները	Տեղ
Հեռախոսային կապի և համացանցի ոլորտում մրցակցություն ¹	1	Պայմանագրերի կիրարկման գործընթացներ, քանակ	137
Ձեռնարկության հիմնման գործընթացներ, քանակ	3	Առաջատար տեխնոլոգիաների պետական գնումները	120
Ձեռնարկության հիմնման տևողություն, օր	8	Աշխատակազմի վերապատրաստման մակարդակ	118
Լայնաշերտ ինտերնետի սակագներ	37	Կառավարման դպրոցների որակ	116
Կառավարության էլ. ծառայություններ	43	Ընկերությունների կողմից տեխնոլոգիաների յուրացում	113
Էլ.- մասնակցության ցուցիչ	59	Դատաիրավական համակարգի անկախություն	107

Ընդհանուր առմամբ, Հայաստանի դիրքերը ցածրից միջին եկամուտներ ունեցող երկրների արդյունքների համեմատ բավականին բարձր են:

Հայաստանը հիմնականում բարելավել է դիրքերը պետական օգտագործման հենասյունով, հատկապես պետության՝ էլ. մասնակցության ցուցչով, որը նախորդ տարիներին ամենաեական թերությունների շարքին էր դասվում: Ուշագրավ առավելություններից է նաև կառավարության էլեկտրոնային ծառայությունների, հեռախոսային կապի և համացանցի ոլորտում մրցակցության, ինչպես նաև լայնաշերտ ինտերնետի սակագների ենթացուցիչները (համապատասխանաբար + 66, +112, +17) Հայաստանի հիմնական ուժեղ կողմերից են շարունակում մնալ ձեռնարկությունների գրանցման հետ կապված հիմնական գործընթացների դյուրինությունը: Ամենախնդրահարույց ոլորտներից են դատաիրավական համակարգը,

¹ Հեռախոսային կապի և համացանցի ոլորտում մրցակցության ցուցչի գնահատականը ներառում է տեղական ֆիքսված, տեղական միջբաղադրյալ ֆիքսված և միջազգային ֆիքսված հեռախոսակապի ոլորտում ծառայություն մատուցող ընկերությունների քանակը: Հեռախոսային կապի և համացանցի ոլորտում մրցակցության ցուցիչը հաշվարկվում է 0-2 սանդղակով: Հայաստան

պայմանագրերի կիրարկումը, ինչպես նաև առաջատար տեխնոլոգիաների պետական գնումների և աշխատակազմի վերապատրաստման մակարդակը:

Ցանցային պատրաստվածության ցուցչի բաղադրիչները և Հայաստանի գնահատականները ներկայացված են ստորև.

		Վարկանիշ 2015թ.	Փոփոխությունը 2014թ. նկատմամբ
1. Միջավայրի բաղադրիչ		78	5
Հենասյուն 1.	Քաղաքական և կարգավորիչ միջավայր	107	-3
Հենասյուն 2.	Գործարար և նորարարական միջավայր	53	14
2. Պատրաստվածության բաղադրիչ		44	7
Հենասյուն 3.	Ենթակառուցվածք	57	-4
Հենասյուն 4.	Մատչելիություն	31	32
Հենասյուն 5.	Հմտություններ	54	-7
3. Օգտագործման բաղադրիչ		65	8
Հենասյուն 6.	Անհատների օգտագործում	74	0
Հենասյուն 7.	Բիզնեսի օգտագործում	100	-18
Հենասյուն 8.	Պետական օգտագործում	45	31
4. Ազդեցության բաղադրիչ		54	13
Հենասյուն 9.	Տնտեսական ազդեցություն	50	-3
Հենասյուն 10.	Սոցիալական ազդեցություն	58	22

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն և «Ի-Վի Քոնսալթինգ» փրբ

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը հանդիսանում է «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը:

Կենտրոնի մասնագիտացումը ներառում է տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրներից մինչև բիզնես զարգացման անհատական հիմնախնդիրներ: Կենտրոնն ուսումնասիրում է տնտեսության և հասարակության զանազան ոլորտներ՝ հարցումների, ֆոկլորային խմբերի քննարկումների, վերլուծությունների, առաջնային և երկրորդային հետազոտությունների միջոցով:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը Համաշխարհային տնտեսական ֆորումի գործընկեր կազմակերպությունն է Հայաստանում:

Ի-Վի Քոնսալթինգը գործարար խորհրդատվական ընկերություն է, որն աջակցում է մրցունակության և նորարարության հաջորդ՝ ավելի բարձր մակարդակի ձգտող կազմակերպություններին:

*Գրասենյակ Հայաստանում՝
Մելիք-Աղամյան 2/1, Երևան, 0010
Հեռ.՝ +374 (10) 546 434
Էլ-փոստ. info@ev.am
www.ev.am
www.evconsulting.am*

*Գրասենյակ Ռուսաստանում՝
Օրլիկով Լյուբանցա, տուն 5, շինություն 2
Մոսկվա, 107078
Հեռ.՝ +7 (495) 602 92 10
Էլ-փոստ. info@evconsulting.com
www.evconsulting.com*